

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՎԵՐՋԻՆԻՍ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Հայաստանի Հանրապետությունում պետական և ազգային կարևորագույն խնդիր է կրթության համակարգի պահպանումը, անընդհատ և շարունակական զարգացումն ու միջազգային չափորոշիչներին համապատասխանեցումը՝ ազգային առանցքային հատկանիշների պահպանմամբ:

2015 թվականին կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2.56%-ը՝ 2014 թվականի 2.69-ի դիմաց (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /ՏՀՀԿ/ անդամ-երկրներում կրթությանն ուղղված պետական ծախսերը միջինում կազմում են ՀՆԱ-ի 4.7 %-ը):

2015 թվականին հանրակրթական դպրոցներում աշակերտ/ուսուցչական դրույք հարաբերակցության մակարդակը կազմել է 14.45 , 2014 թվականին՝ 14.39:

Ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածությունը 2015 թվականին կազմել է շաբաթական 22 ժամ, ինչպես նախորդ տարին էր:

Հայաստանում 2015 թվականի տարեսկզբին գործել է 1389 դպրոց, Շիրակի մարզում երկու դպրոց միավորվել են, տարեվերջին գործել է 1387 դպրոց (հանրակրթական դպրոց՝ 1357, հատուկ դպրոց՝ 23, մասնագիտացված դպրոց՝ 7, ինչպես նաև՝ 55 արտաուսումնական դաստիարակության կազմակերպություն):

Դպրոցների մանկավարժների միջին ամսական աշխատավարձը կազմել է 152200 դրամ, վարչական անձնակազմինը՝ 175200 դրամ:

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը 2015 թվականին 09 «Կրթություն» բաժնով նախատեսված էր իրականացնել ենթակա կազմակերպությունների ֆինանսավորումը յոթ խմբի վաթսուներեք ծրագրերով և այլ բաժիններից՝ տասը ծրագրերով:

Ստորև ներկայացված են այդ ծրագրերի հիմնական կատարողական ցուցանիշները:

1. 09.01.01.01 «Նախադպրոցական կրթություն» ծրագրով միջին տարեկան 226 սաների համար նախատեսված էր 21207.3 հազար դրամ, աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 8848.3 հազար դրամ կամ 71.59%, ինչը պայմանավորված է սաների միջին տարեկան թվի աճով: ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1362-Ն որոշմամբ նվազեցվել է 997.2 հազար դրամ (սաների միջին տարեկան թիվը նախատեսվածի նկատմամբ նվազել է 23.4-ով): Ճշտված նախահաշիվը կազմել է 20210.1 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 20210.1 հազար դրամ կամ 100%: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 5667.8 հազար դրամ կամ 38.97%, որը պայմանավորված է սաների միջին տարեկան 53.2-ով աճով: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 202.6:

2014 թվականին նույն ծրագրով միջին տարեկան 127 սաների համար նախատեսված է 12359.0 հազար դրամ, ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1170-Ն որոշմամբ ավելացվել է 2784.3 հազար դրամ (սաների միջին տարեկան թիվը նախատեսվածի նկատմամբ աճել է 22.4-ով): Ճշտված նախահաշիվը կազմել է 15143.3 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 14542.3 հազար դրամ կամ 96.03%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 149.4:

**2015 թվականին հանրակրթական ուսուցումն իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝**

2. 09.01.02.01 ծրագրով՝ միջին տարեկան 1663.1 սովորողների համար նախատեսված էր 269179.8 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1362-Ն որոշմամբ նվազեցվել է 2539.0 հազար դրամ սովորողների միջին տարեկան նախատեսված թվի փոփոխության հետևանքով, ճշտված նախահաշիվը կազմել է 266640.8 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կատարվել է 100.0 %-ով: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 1649.6 (սովորողների միջին տարեկան նախատեսված թվի նկատմամբ նվազել է 13.5-ով):


3. 09.02.01.02 ծրագրով՝ միջին տարեկան 11113.6 սովորողների համար նախատեսված էր 2222375.7 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1362-Ն որոշմամբ ավելացվել է 14699.1 հազար դրամ, ճշտված

նախահաշիվը կազմել է 2237074.8 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել 2236786.1 հազար դրամ կամ 99.99%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 11182.1 (նախատեսված թվի նկատմամբ աճել է 68.5-ով):

4. 09.02.02.02 ծրագրով՝ միջին տարեկան 29298.1 սովորողների համար նախատեսված էր 6611049.4 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1362-Ն որոշմամբ նվազեցվել է 68270.9 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 6542778.5 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 6542729.7 հազար դրամ կամ 100%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 28943.2 (նախատեսված թվի նկատմամբ նվազել է 354.9-ով):

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին հանրակրթական ուսուցման իրականացման համար նախատեսված էր 9102604.9 հազար դրամ: ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1362-Ն որոշումով կատարված փոփոխությունների արդյունքում ընդամենը նվազեցվել է 56110.8 հազար դրամ (պայմանավորված՝ սովորողների միջին տարեկան նախատեսված թվի նվազմամբ), ճշտված նախահաշիվը կազմել է 9046494.1 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 9046156.6 հազար դրամ կամ 100%: Նվազումը 2014 թվականի նկատմամբ կազմել է 717948.4 հազար դրամ կամ 7.35%, որը պայմանավորված է սովորողների թվի նվազմամբ /2014 թվականի նկատմամբ նվազել է 6713.4-ով/: Միաժամանակ 2015 թվականին տեղի է ունեցել նվազագույն աշխատավարձի բարձրացում: Համակարգում գործել է 123 հանրակրթական դպրոց՝ ինչպես նախորդ տարվա ընթացքում: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 41774.9:

2014 թվականին հանրակրթական ուսուցման իրականացման համար նախատեսված էր 9972497.7 հազար դրամ: ՀՀ կառավարության համապատասխան որոշումով կատարված փոփոխությունների արդյունքում ընդամենը նվազեցվել է 208275.6 հազար դրամ (պայմանավորված՝ սովորողների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նվազման հետ), ճշտված նախահաշիվը կազմել է 9764222.1 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 9764105.0 հազար դրամ կամ 100%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 48488.3:



**Լուսապատկեր 1. ՀՀ ԿԳՆ ենթակայության ուս. հաստատությունների հանրակրթական ուսուցմանը հարկացված բյուջեերային միջոցները 2011-2015թթ.**

**2015 թվականին հատուկ կրթությունն իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝**

5. 09.01.02.03 ծրագրով՝ միջին տարեկան 361 սաների համար նախատեսված էր 562254.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 551145.0 հազար դրամ կամ 98.02%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 359.6 (սաների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ նվազել է 1.4-ով):

6. 09.02.01.04 ծրագրով՝ միջին տարեկան 537 սաների համար նախատեսված էր 851995.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 839867.6 հազար դրամ կամ 98.58%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 531.4 (սաների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ նվազել է 5.6-ով):

7. 09.02.02.04 ծրագրով՝ միջին տարեկան 373 սաների համար նախատեսված էր 593577.4 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 589813.8 հազար դրամ կամ

99.37%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 368.6 (սաների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ նվազել է 38.1-ով):

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին հատուկ կրթության իրականացման համար նախատեսված էր 2007826.4 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1980826.4 հազար դրամ կամ 98.66%: Համակարգում տարեսկզբին գործել է 10 դպրոց, տարեվերջին՝ 9 դպրոց, ինչը պայմանավորված է դպրոցներից մեկի՝ հատուկ կրթությունից ներառական կրթության ծրագիր անցման հետ, որով էլ պայմանավորված է տնտեսումը: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 1259.6: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 6.43% կամ 119747 հազար դրամ, որը պայմանավորված է 2015 թվականի հուլիսի մեկից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2014 թվականին հատուկ կրթության իրականացման համար նախատեսված էր 1851078.9 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումով կատարված փոփոխությունների արդյունքում ընդամենը ավելացվել է 13555.7 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 1864634.6 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 1861079.4 հազար դրամով 99.81%-ով: Համակարգում գործել են 10 դպրոց, սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 1290.7:

**2015 թվականին ներառական կրթությունն իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝**

**8.** 09.01.02.04 ծրագրով՝ միջին տարեկան 63.0 սովորողների համար նախատեսված էր 36446.7 հազար դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջծրագրային վերաբաշխման միջոցով նվազեցվել է 5400.0 հազար դրամ տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճարները վճարելու նպատակով, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1362-Ն որոշմամբ ավելացվել է 2523.3 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 33570.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 33570.0 հազար դրամ, կամ 100%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 69.3 (սովորողների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ աճել է 6.3-ով):

**9.** 09.02.01.05 ծրագրով՝ միջին տարեկան 286.0 սովորողների համար նախատեսված էր 165456.4 հազար դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջծրագրային վերաբաշխման միջոցով նվազեցվել է 18600.0 հազար դրամ տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճարները վճարելու նպատակով, ճշտված նախահաշիվը կազմել է 146856.4 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 145014.0 հազար դրամ կամ 98.75%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 305 (սովորողների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ աճել է 19-ով):

**10.** 09.02.02.05 ծրագրով՝ միջին տարեկան 162.0 սովորողների նախատեսված էր 93720.0 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1362-Ն որոշումով նվազեցվել է 12264.0 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 81456.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 79187.6 հազար դրամ, կամ 97.22%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 164.3 (սովորողների միջին տարեկան նախատեսված թվի նկատմամբ աճել է 2.3-ով):

Ընդհանուր առմամբ 2015 թվականին ներառական կրթության իրականացման համար նախատեսված էր 295623.1 հազար դրամ, աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 12992.1 հազար դրամ կամ 4.60%, որը պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: ՀՀ կառավարության համապատասխան որոշումով և միջծրագրային վերաբաշխմամբ նվազեցվել է 33740.7 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 261882.4 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 257777.1 հազար դրամ կամ 98.43%: 2015 թվականին ներառական կրթության համակարգում սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 538.6: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 12.69% կամ 29025.6 հազար դրամ:

2014 թվականին ներառական կրթության իրականացման համար նախատեսված էր 282631.0 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով նվազեցվել է 45456.2 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 237174.8 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 228751.5 հազար դրամ կամ 96.45%: 2014 թվականին ներառական կրթության համակարգում սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 507.6:

2015 թվականին մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպումը իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝

11. 09.01.02.08 ծրագրով՝ միջին տարեկան 119 սաների համար նախատեսված էր 112066.6 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 112066.6 հազար դրամ կամ 100%: Սաների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 122 (սաների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ աճել է 3-ով):

12. 09.02.01.10 ծրագրով միջին տարեկան 1095.0 սաների համար նախատեսված էր 958694.5 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1362-Ն որոշմամբ ավելացվել է 28283,4 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 986977.9 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 985977.9 հազար դրամ կամ 99.90%: Սաների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 1167.3 (սաների միջին տարեկան նախատեսված թվի նկատմամբ աճել է 72.3-ով):

13. 09.02.02.11 ծրագրով միջին տարեկան 1208.6 սաների նախատեսված էր 1164441.7 հազար դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջծրագրային վերաբաշխման միջոցով նվազեցվել է 17973,0 հազար դրամ՝ Կրթության գերազանցության ազգային ծրագրի ամբողջական իրականացման նպատակով, ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N 570-Ն որոշումով նվազեցվել է 15032,9 հազար դրամ՝ չինարենի խորացմամբ ուսուցման դպրոցի կառուցման նպատակով, Երևան քաղաքի Զաքարիա Սարկավազի 14 հասցեում գտնվող շինության ստորգետնյա երկաթբետոնե հիմքերի քանդման աշխատանքներն իրականացնելու համար, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1127-Ն որոշմամբ նվազեցվել է 8950,0 հազար դրամ «Ուսուցչի օր» տոնի կապակցությամբ ուսուցիչների մեծարման և արժևորման երեկո կազմակերպելու նպատակով, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1163-Ն որոշմամբ նվազեցվել է 50653,0 հազար դրամ «Ապարանի ռազմամարզական վարժարան» ՊՈԱԿ-ի շենքի էլեկտրամոնտաժային, ջեռուցման, սանհանգույցների, տանիքի, խաղահրապարակի վերանորոգման, արտաքին գազաֆիկացման աշխատանքների իրականացման և վարժարանի համար ննջասենյակային, խոհանոցային կահույքի, սարքերի ու սարքավորումների ձեռքբերման նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1257-Ն որոշմամբ նվազեցվել է 20000,0 հազար դրամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարավում,

Արաքսի ցածրադիր գոտում ուսումնասիրտադրական բազայի շինարարության նպատակով, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1263-Ն որոշմամբ նվազեցվել է 30668,9 հազար դրամ՝ «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1362-Ն որոշմամբ նվազեցվել է 70308,7 հազար դրամ՝ սաների միջին տարեկան թվաքանակի փոփոխության հետևանքով, ճշտված նախահաշիվը կազմել է 950855.2 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 929840.8 հազար դրամ կամ 97.79%: Տնտեսումը պայմանավորված է Ապարանի ռազմամարզական վարժարանի՝ նախատեսված ծավալով չգործելու հետ: Սաների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 1171 (սաների միջին տարեկան նախատեսված թվի նկատմամբ նվազել է 37.6-ով):

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար նախատեսված էր 2235202.8 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կատարված փոփոխությունների արդյունքում ընդամենը նվազեցվել է 185303.1 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 2049899.7 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 2027885.3 հազար դրամ կամ 98.93%: Համակարգում տարեվերջում գործել է 7 դպրոց, սաների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 2460.3: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 7.42% կամ 140013 հազար դրամ, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2014 թվականին մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար նախատեսված էր 2112130.6 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումով կատարված փոփոխությունների արդյունքում ընդամենը նվազեցվել է 110470.7 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 2001659.9 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 1887872.3 հազար դրամ կամ 94.32%: Համակարգում տարեվերջում գործել է 7 դպրոց, սաների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 2520.3:




**2015 թվականին մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակների տրամադրումը իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝**

14. 09.02.01.11 ծրագրով՝ որի համար նախատեսված էր 3214.1 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 2848.8 հազար դրամ կամ 88.63 %: Կրթաթոշակ ստացողների թիվը կազմել է 54 սան:

15. 09.02.02.12 ծրագրով՝ որի համար նախատեսված էր 10177.9 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 8597.6 հազար դրամ կամ 84.47%: Կրթաթոշակ ստացողների թիվը կազմել է 197 սան:

Ընդհանուր առմամբ 2015 թվականին մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակների տրամադրման համար նախատեսված էր 13392.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 11446.4 հազար դրամ կամ 85.47%: Կրթաթոշակ ստացողների թիվը կազմել է 251 սան, տնտեսումը պայմանավորված է նրանով, որ կրթաթոշակը տրամադրվել է միայն որոշակի չափանիշների բավարարող սաներին: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 8782.88 հազար դրամ կամ 329.75%, ինչը պայմանավորված է սաների թվի աճով:

2014 թվականին մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների կրթաթոշակների տրամադրման համար նախատեսված էր 13392.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 2663.52 հազար դրամ կամ 19.89%: Կրթաթոշակ ստացողների թիվը կազմել է 216 սան:



**Լուսապատկեր 2. Հատուկ, ներառական և մասնագիտացված հանրակրթական ուսուցումներին ՀՀ 2015թ. պետ. բյուջեից հատկացված միջոցները, հազ. դրամ**

**2015 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը  
իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝**

16. 09.03.01. «01. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» ծրագրով, որի իրականացման համար նախատեսված էր 2309397.4 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1159-Ն որոշմամբ նվազեցվել է 199999,2 հազար դրամ Վարդենիս-Մարտակերտ մայրուղու հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով, ճշտված նախահաշիվը կազմել է 2109398.2 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 2060211.0 հազար դրամ կամ 97.67%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 6831 (սովորողների միջին տարեկան նախատեսված թվի նկատմամբ նվազել է 883-ով):

17. 09.03.01. «02. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով, որի իրականացման համար նախատեսված էր 430441.2 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1159-Ն որոշմամբ նվազեցվել է 37274,4 հազար դրամ Վարդենիս-Մարտակերտ մայրուղու հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով, ճշտված նախահաշիվը կազմել է 393166.8 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 380426.6 հազար դրամ կամ 96.76%: Կրթաթոշակ ստացող սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 6831 (սովորողների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ նվազել է 883-ով): Տնտեսումը կապված է կրթաթոշակ ստացող սովորողների թվաքանակի նվազման հետ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության իրականացման համար նախատեսված էր 2739838.6 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումով ընդհանուր առմամբ նվազեցվել է 237273.6 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 2502565.0 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 2440637.6 հազար դրամ կամ 97.53%: 2014 թվականի նկատմամբ դրամարկղային ծախսի աճը կազմել է 81281.6 հազար դրամ կամ 3.45%, որը պայմանավորված է 2015 թվականին նվազագույն աշխատավարձի բարձրացման: Համակարգում գործել է 25 արհեստագործական ուսումնարան:

2014 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության իրականացման համար նախատեսված էր 2699837.7 հազար դրամ, ՀՀ կառավարության

համապատասխան որոշումներով ընդհանուր առմամբ նվազեցվել է 315108.9 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 2384728.8 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 2359356.0 հազար դրամ կամ 98.94%: Համակարգում գործել է 25 արհեստագործական ուսումնարան:

**2015 թվականին միջին մասնագիտական կրթությունը իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝**


**18.** 09.03.02. «01. Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով, որի իրականացման համար նախատեսված էր 6438206.4 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1159-Ն որոշմամբ նվազեցվել է 1458958,0 հազար դրամ Վարդենիս-Մարտակերտ մայրուղու հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1342-Ն որոշմամբ նվազեցվել է 17000,0 հազար դրամ՝ հասարակության շրջանում գիտելիքների մակարդակի բարձրացմանը խթանող միջոցառումների իրականացման նպատակով, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1362-Ն որոշմամբ նվազեցվել է 400000,0 հազար դրամ՝ սովորողների թվի փոփոխման հետ կապված, ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1508-Ն որոշմամբ նվազեցվել է 120000,0 հազար դրամ, որից՝ 90000.0 հազ. դրամը՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին կրթաթոշակներ հատկացնելու նպատակով և 30000.0 հազ. դրամը՝ երիտասարդ գիտաշխատողներին աջակցելու նպատակով, ճշտված նախահաշիվը կազմել է 4442248.4 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 4433100.0 հազար դրամ կամ 99.79%: Սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 12034 (սովորողների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ նվազել է 3333-ով):

**19.** 09.03.02. «02. Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով, որի իրականացման համար նախատեսված էր 613149.0 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1159-Ն որոշմամբ նվազեցվել է 138931,8 հազար դրամ Վարդենիս-Մարտակերտ մայրուղու հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով, ճշտված նախահաշիվը կազմել է 474217.2 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 473499.0 հազար դրամ կամ 99.85%:

Կրթաթոշակ ստացող սովորողների միջին տարեկան ճշտված թիվը կազմել է 8307, (սովորողների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ նվազել է 2450-ով):

Ընդհանուր առմամբ, միջին մասնագիտական կրթության իրականացման համար նախատեսված էր 7051355.4 հազար դրամ, աճը 2014 թվականի նկատմամբ պայմանավորված է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կատարված փոփոխությունների արդյունքում ընդամենը նվազեցվել է 2134889.8 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 4916465.6 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 4906599.0 հազար դրամ կամ 99.80%: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 37.76% կամ 1344856.9 հազար դրամ, որը կապված է նվազագույն աշխատավարձի բարձրացման, մանկավարժական և վարչական աշխատողների՝ 132.3 հազար դրամ դառնալու հետ, որը 2015թ. հաշվակվել է տարեկան կտրվածքով /բարձրացումը 2014 թվականին տեղի էր ունեցել հուլիսի մեկից, /2014 թվականին վարչական և մանկավարժական աշխատողների՝ դրույքաչափը կազմել էր 64.7 հազար դրամ/:

2014 թվականին միջին մասնագիտական կրթության իրականացման համար նախատեսված էր 4482763.8 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կատարված փոփոխությունների արդյունքում ընդամենը նվազեցվել է 610826.6 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 3871937.2 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 3561742.1 հազար դրամ կամ 91.99%:



**Լուսապարկեր 3. Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթությանը 2015 թվականին հատկացված բյուջերային միջոցները, հազ. դրամ**

**2015 թվականին բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝**

**20.** 09.04.01. «02. Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով, որի համար նախատեսված էր 7723315.6 հազար դրամ, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1159-Ն որոշմամբ նվազեցվել է 299899,6 հազար դրամ Վարդենիս-Մարտակերտ մայրուղու հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով: Ծրագրի ճշտված նախահաշիվը կազմել է 7423416.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 7351334.4 հազար դրամ կամ 99.03%:

**21.** 09.04.01. «03. Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով, որի համար նախատեսված էր 624811.2 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 623187.4 հազար դրամ կամ 99.74%:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին նախարարությանը բարձրագույն մասնագիտական կրթության իրականացման համար նախատեսված էր 8348126.8 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումով նվազեցվել է 299899.6 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 8048227.2 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 7974521.8 հազար դրամ կամ 99.08%:

Համակարգում գործել է 22 բարձրագույն ուսումնական հաստատություն. նախորդ տարվա համեմատ ցանկում ավելացել են «Երևանում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան»-ի մասնաճյուղը և «Հայաստանում ֆրանսիական բարձրագույն ինժեներական ինստիտուտ» հիմնադրամը: Ուսանողների միջին տարեկան թիվը կազմել է 10656, որից արտասահմանցի ուսանողներ՝ 201, մագիստրոսներ՝ 3032:

2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 12.76% կամ 902586.9 հազար դրամ, որը կապված է նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ:

2014 թվականին նախարարությանը բարձրագույն մասնագիտական կրթության իրականացման համար նախատեսված էր 7324702.0 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումով նվազեցվել է 20973.2 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 7303728.8 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 7071934.9 հազար դրամ կամ 96.83%: Համակարգում գործել են 20 բարձրագույն ուսումնական

հաստատություն, ուսանողների միջին տարեկան թիվը կազմել է 10662, որից արտասահմանցի ուսանողներ՝ 256, մագիստրոսներ՝ 3063:


**2015 թվականին հետբուհական մասնագիտական կրթությունը իրականացվել է ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի՝**

22.09.04.02. «03. Հետբուհական մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով, որի համար նախատեսված էր 478513.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 468690.2 հազար դրամ կամ 97.95%, որը կապված է օտար լեզվի ու ինֆորմատիկայի դասընթացների կազմակերպման համար նախատեսված միջոցների տնտեսումից:

23.09.04.02. «04. Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով, որի համար նախատեսված էր 200250.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 200250.0 հազար դրամ կամ 100%:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին նախարարությանը հետբուհական մասնագիտական կրթության իրականացման համար նախատեսված էր 678763.0 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 668940.2 հազար դրամ կամ 98.55%: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 70704.5 հազար դրամ կամ 11.82%, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Ծրագիրը իրականացվել է 14 բարձրագույն ուսումնական հաստատություններում, ասպիրանտների թիվը կազմել է 924, որից հեռակա 559 և ստացիոնար 365, օրդինատոր/այդ թվում ինտերնատուրա/՝ 208, դոկտորանտներ՝ 18: Վերապատրաստվել են թվով 1200 բժիշկներ և բուժքույրեր:

2014 թվականին նախարարությանը հետբուհական մասնագիտական կրթության իրականացման համար նախատեսված էր 608323.7 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 598235.7 հազար դրամ կամ 98.34%: Ծրագիրը իրականացվել է 14 բարձրագույն ուսումնական հաստատություններում, ասպիրանտների թիվը կազմել է 913, որից հեռակա 545 և ստացիոնար 368, օրդինատոր՝ 213, դոկտորանտներ՝ 18: Վերապատրաստվել է շուրջ 1200 բժիշկ և բուժքույր:



**Լուսապատկեր 4. Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթությանը պետական բյուջեից կատարված հատկացումները (ներառյալ՝ կրթաթոշակները), 2014-2015թթ.**

**24. 09.05.01. «01. Աջակցություն արտադպրոցական դաստիարակությանը»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 10000.0 հազար դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջծրագրային վերաբաշխման միջոցով ավելացվել է 3000,0 հազար դրամ՝ ՌԴ Ուլյանովսկ քաղաքում “ԱՊՀ մասնակից պետությունների միջև դպրոցական սպորտի երրորդ միջազգային փառատոն”-ին ՀՀ պատվիրակության մասնակցության նպատակով, ճշտված նախահաշիվը կազմել է 13000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով, ինչպես 2014 թվականին: Ծրագրի շրջանակում անցկացվել է ՀՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադան, Հայաստանը գրավել է 3-րդ տեղը: Կազմակերպվել են հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտերից հանրապետական առաջնություններ, որոնց հաղթողները մասնակցել են դպրոցականների համաշխարհային գիմնազիադային: Լավագույն ռազմահայրենասիրական և դաստիարակչական ծրագրերի մասսայականացման և դպրոցների միջև փորձի փոխանակման նպատակով իրականացվել է լավագույն աշխատանքների տպագրություն:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 10000.0 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կատարվել է 100 %-ով: Ծրագրի շրջանակում անցկացվել է ՀՀ

դպրոցականների շախմատի 8-րդ օլիմպիադայի 3 փուլերը՝ թվով 300 մասնակցով, ՀՀ դպրոցականները մասնակցել են Թուրքմենստանում կայացած «Դպրոցական մշակութային մարզական փառատոն»-ին լողափնյա վոլեյբոլ և սեղանի թենիս սպորտաձևերով:

**25. 09.05.01. «02. Արտադպրոցական դաստիարակություն»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 1101398.3 հազար դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջծրագրային վերաբաշխման միջոցով նվազեցվել է 3000,0 հազար դրամ՝ ՌԴ Ուլյանովսկ քաղաքում “ԱՊՀ մասնակից պետությունների միջև դպրոցական սպորտի երրորդ միջազգային փառատոն”-ին ՀՀ պատվիրակության մասնակցության նպատակով, ճշտված նախահաշիվը կազմել է 1098398.3 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 1091355.3 հազար դրամ, կամ 99.36%: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 31.25% կամ 259830.9 հազար դրամ, որը պայմանավորված է վարչական, ուսումնական և հաշվապահական հաստիքների և դրույքաչափի՝ 2015 թվականի ամբողջ տարվա համար ամսական 132200 դրամ սահմանմամբ, նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Համակարգում գործել է 10 հաստատություն, սովորողների միջին տարեկան թիվը կազմել է 7638 երեխա, ինչպես նախորդ տարին էր:

2014 թվականին նախատեսված էր 920301.6 հազար դրամ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով նվազեցվել է 88000.0 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 832301.6 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 831524.4 հազար դրամ, կամ 99.918%: Համակարգում գործել են 10 հաստատություն, սովորողների միջին տարեկան թիվը կազմել է 7638 երեխա:

**26. 09.05.01. «14. Դպրոցահասակ երեխաների մասնակցություն դպրոցական խաղերին»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված է 49500.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով /նույնը՝ 2014 թվականին/: Ծրագրի շրջանակում ՀՀ դպրոցականները մասնակցել են Ֆրանսիայում կայացած բասկետբոլի աշխարհի առաջնությանը, ՀՀ դպրոցականները մասնակցել են ՌԴ Ուլյանովսկ քաղաքում “ԱՊՀ մասնակից պետությունների միջև դպրոցական սպորտի



երրորդ միջազգային փառատոնին, որտեղ շախմատի թիմային հաշվարկում և աղջիկների անհատական հաշվարկում Հայաստանը գրավել է 1-ին տեղը, բաղմինթոն մարզաձևում 4 մրցապայքարից յուրաքանչյուրում՝ թիմային հաշվարկ, աղջիկների անհատական խաղ, աղջիկների և տղաների զուգախաղեր, Վրաստանում կայացած լողափնյա վոլեյբոլի դպրոցականների միջազգային առաջնությանը, որտեղ Հայաստանը արժանացել է արծաթե մեդալի և գավաթի, Ուկրաինայում կայացած պատանիների միջազգային մրցաշարին, որտեղ Հայաստանի մարզիկն արժանացել է բրոնզե մեդալի: Անցկացվել են ֆուտբոլ և բասկետբոլ մարզաձևերից հանրապետական մրցումներ, որոնց մասնակցել է 336 հոգի: Կատարվել է 2016 թվականի դպրոցականների աշխարհի առաջնություններին մասնակցելու նպատակով կանխավճար: Կատարվել են ուսուցողական խորհրդակցություններ: ՀՀ դպրոցականների աշխարհի առաջնությանը նախապատրաստելու համար կազմակերպվել են ուսումնամարզական հավաք հանդբոլ, սեղանի թենիս և ֆուտ-զալ մարզաձևերից:

2014 թվականի ծրագրի շրջանակում ՀՀ դպրոցականները մասնակցել են Ֆրանսիայում կայացած սեղանի թենիսի դպրոցականների աշխարհի առաջնությանը, Պորտուգալիայում կայացած վոլեյբոլի դպրոցականների աշխարհի առաջնությանը, Իտալիայում կայացած Ֆուտ-զալի դպրոցականների աշխարհի առաջնությանը, Թուրքիայում կայացած Հանդբոլի դպրոցականների աշխարհի առաջնությանը, ԱՊՀ երկրների դպրոցականների միջազգային սպորտային 2-րդ փառատոնի մասնակցությանը: Անցկացվել են ֆուտբոլ և բասկետբոլ մարզաձևերից հանրապետական մրցումներ, որոնց մասնակցել է 336 հոգի: Կատարվել է 2015 թվականի միջազգային միջոցառումներին մասնակցելու նպատակով կանխավճար:

**27. 09.05.01. «17. Ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղակարողության հրականացում»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված է 64286.1 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: 2015 թվականի ընթացքում երկրապահ կամավորականների միության 73 մարզային և տարածքային բաժանմունքներում, սփյուռքի 15 ներկայացուցչություններում երկրապահ ակումբների թվին ավելացան ևս 1437-ը: Անցկացվել է հրամանատարասերժանտական դասընթացների 8 փուլ՝ 5-ը դպրոցներում և 3-ը ամռանը ճամբարում կազմակերպվող պատանիների հանգստի ու ուսումնամարզական հավաքների ժամանակ: Շաբաթական 3

օր ԵԿՄ տարածքային բաժանմունքներում և շաբաթական 5 օր դպրոցներում անցկացվում են պարապմունքներ, իսկ կիրակի օրերին տարածքներում անցկացվում են հրամանատարասերժանտական դասընթացներ: Սևանի ափին հանգստացել և դասընթացներ են անցել 4945 տղա և աղջիկ: 2015թ. վերջին մեկնարկել է ՀՀ և ԼՂՀ մարզեր ուխտագնացությունների կազմակերպումը: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին:

**28. 09.06.01. «01. Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում»** ծրագրով նախատեսվել է 36214.3 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 30119.8 հազար դրամ կամ 83.17%: Տնտեսումը կապված է նախատեսված միջոցառումների՝ պակաս թվով իրականացման հետ: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 15145.9 հազար դրամ կամ 101.15%: Վերապատրաստվել է 63 ուսուցիչ 15 երկրներից, որից 60-ը ստացել են վկայագիր, իսկ 3-ը՝ տեղեկանք՝ դասընթացներին մասնակցելու վերաբերյալ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 36113.5 հազար դրամ, ՀՀ դրամարկղային ծախսը կազմել է 14973.9 հազար դրամ կամ 48.13%: Վերապատրաստվել է 48 ուսուցիչ, որից 41-ը ստացել են վկայագիր, իսկ 7-ը՝ տեղեկանք՝ դասընթացներին մասնակցելու վերաբերյալ:

**29. 09.06.01. «04.Ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրում»** ծրագրով նախատեսված էր 46986.0 հազար դրամ, աճը 2014 թվականի նկատմամբ պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Դրամարկղային ծախսը կազմել է 28974.7 հազար դրամ կամ 61.67%: Բնակիչների թիվը կազմել է 185 նախատեսված 300-ի դիմաց: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 25.74% կամ 5931.5 հազար դրամ, աճը պայմանավորված է նախորդ տարվանից 5-ով ավելի բնակիչների թվով:

2014 թվականին ծրագրով նախատեսված էր 41872.2 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 23043.2 հազար դրամ կամ 55.03%: Բնակիչների թիվը կազմել է 180 նախատեսված 300-ի դիմաց:

**30. 09.06.01. «07. Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր

449730.0 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 100%, կազմակերպվել է 4500 երեխայի ամառային հանգիստը: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել 75519.0 հազար դրամ կամ 20.18%, որը պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2014 թվականին նույն ծրագրով նախատեսված էր 374211.0 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 100%, կազմակերպվել է 4500 երեխայի ամառային հանգիստը:

31.09.06.01. «08. Ավարտական փաստաթղթերի գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում» ծրագրով՝ վկայականների (15500 հատ), ատեստատների (26150 հատ), դիպլոմների (2700 հատ), գովասանագրերի (38000 հատ), դասամատյանների (21132 հատ), հուշամեդալների (100 հատ), առաջադիմության մեդալների (54 հատ), շնորհակալագրերի (300 հատ), ուսումնական ձեռնարկների, ուղեցույցների, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների (38 անուն) ձեռքբերման համար նախատեսված էր 287075.6 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 285876.15 հազար դրամ կամ 99.58%: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 0.64% կամ 1812.85 հազար դրամ, որը պայմանավորված է կայացած մրցույթների արդյունքում ձևավորված գներով:

2014 թվականին վկայականների (34600 հատ), ատեստատների (28700 հատ), դիպլոմների (3000 հատ), գովասանագրերի (38000 հատ), պատվոգրերի (1000 հատ), դասամատյանների (21350 հատ), հուշամեդալների (110 հատ), առաջադիմության մեդալների (60 հատ), շնորհակալագրերի (1500 հատ), հավաստագրերի /1000/, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների (39 անուն) ձեռքբերման համար նախատեսված էր 287075.6 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 284063.3 հազար դրամ կամ 98.95%, որը պայմանավորված է կայացած մրցույթների արդյունքով:

32. 09.06.01. «09. Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում ու ավագ դպրոցների

դասագրքերի հրատարակում» ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 969056.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 965503.05 հազար դրամ կամ 99.63%: 2014 թվականի նկատմամբ դրամարկղային ծախսը նվազել է 1551.52 հազար դրամ կամ 0.16%, պայմանավորված՝ ձեռք բերված քանակներով: Ծրագրի իրականացման համար տպագրվել է՝ «Այբբենարան» 39653 հատ, «Այբբենարան-1» ուսուցչի ձեռնարկ 2018 հատ, «Մաթեմատիկա-1 /1-ին մաս/» 39760 հատ, «Մաթեմատիկա-1 /2-րդ մաս/» 24650 հատ, «Մաթեմատիկա-3» 14631 հատ, «Մաթեմատիկա-4» 20454 հատ, «Մայրենի-1» 26607 հատ, «Մայրենի-3» 16098 հատ, «Մայրենի-4» 21885 հատ, «Երաժշտություն-2» 26169 հատ, 'Անգլերեն ABC-3» 10152 հատ, «Անգլերեն-3» 20922 հատ, «Ֆրանսերեն «Bon voyage-1»-3» 6701 հատ, «Գերմաներեն-3» 4151 հատ, «Ես և շրջակա աշխարհը-3» 16773 հատ, «Ես և շրջակա աշխարհը-4» 21158 հատ, «Կերպարվեստ-1» 39744 հատ, «Կերպարվեստ-3» 28926 հատ, «Կերպարվեստ-4» 13760 հատ, «Տեխնոլոգիա-1՝ /աշխատանքային տեսոր/ 39367 հատ, «Տեխնոլոգիա-3» 18677 հատ, «Տեխնոլոգիա-4» 20523 հատ, «Եզդիերեն լեզու և գրականություն-1» /Այբբենարան/ 1000 հատ, «Եզդիերեն լեզու և գրականություն-2» 1000 հատ, «Եզդիերեն լեզու և գրականություն-8» 1000 հատ, «Եզդիերեն լեզու և գրականություն-12» 1000 հատ, «Եզդիերեն» 1-12 դասարանների ծրագիր 1000 հատ, «Քրդերեն-8» 700 հատ, «Քրդերեն-9» 700 հատ, «Քրդերեն քերականություն 5-9» 700 հատ, «Ռուսաց լեզու-2 /Быкварь/» 8025 հատ, «Ռուսաց լեզու-2 23303 հատ «Շախմատ-2, դասագիրք» 1500 հատ, «Շախմատ-2» խնդրագիրք /աշխատանքային տեսոր/» 38000 հատ, «Շախմատ-3, դասագիրք» 38000 հատ «Շախմատ-3, խնդրագիրք /վարժությունների տեսոր» 38000 հատ, «Շախմատ-4 դասագիրք» 1500 հատ, «Շախմատ-4, խնդրագիրք /աշխատանքային տեսոր/» 36000 հատ, «Հայոց լեզու-11» /հումանիտար հոսք/ 4275 հատ, «Հայոց լեզու-11» /ընդհանուր և բնամաթեմատիկական հոսք/ 17285 հատ, «Հայ գրականություն-11» /ընդհանուր և բնամաթեմատիկական հոսք/ 17378 հատ, «Հայ գրականություն-11» /հումանիտար հոսք/ 4182 հատ, «Հայոց պատմություն-11» /հումանիտար հոսք/ 3086 հատ, «Հայոց պատմություն-11» /ընդհանուր և բնամաթեմատիկական հոսք/ 18474 հատ, «Հայոց եկեղեցու պատմություն-2» 3000 հատ, «Հայոց եկեղեցու պատմություն-3» 3000 հատ, «Հայոց եկեղեցու պատմություն-4» 3000 հատ, «Հասարակագիտություն-11» 21560 հատ:

2014 թվականին Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում ու ավագ դպրոցների դասագրքերի

հրատարակում» ծրագրով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 969056.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 967054.57 հազար դրամ կամ 99.79%: Ծրագրի իրականացման համար տպագրվել է՝ «Այբբենարան» 41073 հատ, «Մաթեմատիկա 1 /1 մաս/» 3072 հատ, «Մաթեմատիկա 1 /2 մաս/» 37846 հատ, «Մաթեմատիկա 2» 25914 հատ, «Մաթեմատիկա 3» 27791 հատ, «Մայրենի 2» 26712 հատ, «Մայրենի 3» 27000 հատ, «Երաժշտություն 4» 29550 հատ, «Ես և շրջակա աշխարհը 2» 24562 հատ, «Ես և շրջակա աշխարհը 3» 24286 հատ, «Կերպարվեստ-1» 41066 հատ, «Կերպարվեստ-2» 35918 հատ, «Կերպարվեստ ուսուցչի ձեռնարկ /ՈՒՁ/» 2858 հատ, «Տեխնոլոգիա 1» 41208 հատ, «Տեխնոլոգիա 2» 30116 հատ, «Տեխնոլոգիա 3» 20132 հատ, Տեխնոլոգիա 1-4 ՈՒՁ» 2910 հատ,» Ֆիզկուլտուրա 4» 22106 հատ, «Եզդիերեն 1» 1000 հատ, «Եզդիերեն 6» 1000 հատ, «Եզդիերեն 7» 1000 հատ, «Եզդիերեն 11» 1000 հատ, «Քրդերեն 5» 700 հատ, «Քրդերեն 6» 700 հատ, «Քրդերեն 7՝ 700 հատ, «Ռուսաց լեզու 4» 34424 հատ, Շախմատ 2, դասագիրք» 32932 հատ, «Շախմատ 2, խնդրագիրք» 32932 հատ, «Հայոց լեզու 10» /հումանիտար հոսք/ 20000 հատ, «Հայոց լեզու 10» /ընդհանուր և բնամաթեմատիկական հոսք/ 10000 հատ, «Հայ գրականություն 10» /ընդհանուր հոսք/ 30000 հատ, «Հայոց պատմություն 10» /հումանիտար հոսք/ 10000 հատ, «Հայոց պատմություն 10» /ընդհանուր և բնամաթեմատիկական հոսք/ 20000 հատ, «Հայոց եկեղեցու պատմություն 2» 3000 հատ, «Հայոց եկեղեցու պատմություն 3» 3000 հատ, «Հայոց եկեղեցու պատմություն 4» 3000 հատ, «Հասարակագիտություն 10» 30000 հատ:

**33. 09.06.01.«10. Փոխհապուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին»**  
Ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 63200.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 63.84%-ով, կամ 40348.05 հազար դրամի չափով, գործուղված մանկավարժների թիվը կազմել է 236 նախատեսված 310-ի դիմաց: Ֆինանսավորումը կատարվել է ըստ ՀՀ մարզերի կողմից ներկայացված պարտավորությունների: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ նվազումը կազմել է 0.05% կամ 19.85 հազար դրամ:

2014 թվականին պետական բյուջեով նախատեսված էր 63200.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 63.87%-ով, կամ 40367.9 հազար դրամի չափով, գործուղված մանկավարժների թիվը կազմել է 253 նախատեսված 310-ի դիմաց:

Ֆինանսավորումը կատարվել է ըստ ՀՀ մարզերի կողմից ներկայացված պարտավորությունների:

**34. 09.06.01. «11. Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 5672.3 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 5205.1 հազար դրամ կամ 91.76%: Տնտեսումը պայմանավորված է նախատեսված թվից պակաս թվով աշակերտների կողմից տրանսպորտային ծառայություններից օգտվելու հետ: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 580.0 հազար դրամ կամ 12.54%, ինչը պայմանավորված է 2014 թվականի համեմատ տրանսպորտային ծառայություններից ավելի շատ օգտված դպրոցականների թվով: Ծրագրի օգտվել է թվով 5 մարզային ավագ դպրոց:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 5672.3 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 4625.1 հազար դրամ կամ 81.54%:

**35. 09.06.01. «12. Ռազմագիտության կարիներտների վերականգնում»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 15304.5 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 15304.34 հազար դրամ կամ 100%: Աճը 2014 թվականի դրամարկղի ծախսի նկատմամբ կազմել է 1.19 հազար դրամ կամ 0.01%: Տարբերությունը պայմանավորված է գնման գործընթացով: Պատրաստվել են տեսասկավառակներ՝ «Տեղեկատվական պատերազմ» 1505 հատ, «Փողոցային բարքեր» 1505 հատ, «Հրամանատարի դերն ու նշանակությունը» 1505 հատ, «Ձիրավիի ճակատամարտ» 1505 հատ, «Ակոռիի ճակատամարտ» 1505 հատ:

2014 թվականին նախատեսված էր 15304.5 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 15303.15 հազար դրամ կամ 99.99%: Ձեռք են բերվել «Առաջին օգնություն» տեսասկավառակ և համանուն ձեռնարկ 2325 հատ, «Արտակարգ իրավիճակներ» տեսասկավառակ և համանուն ձեռնարկ 2325 հատ:

**36. 09.06.01. «13. Դպրոցականների հանրապետական սպարտակիստային անցկացում»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 35000.0 հազար դրամի դրամարկղային ծախսը կատարվել է 100 %-ով:

Անց է կացվել ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 24-րդ խաղերը՝ 9 մարզաձևերից, յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով, հանրապետական եզրափակիչ փուլին մասնակցել է 1026 դպրոցական:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված 35000.0 հազար դրամի դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Անց է կացվել ՀՀ անկախության 23-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 23-րդ խաղերը՝ 9 մարզաձևերից, յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով, շուրջ 1026 մասնակիցներով:

**37. 09.06.01. «14.Դպրոցականների օլիմպիադաների անցկացում»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 64688.0 հազար դրամ: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 5000.0 հազար դրամ, որը պայմանավորված է անցկացվող օլիմպիադաների քանակով և տեղով, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Անց է կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից, որին մասնակցել են 1404 դպրոցականներ, համահայկական հայագիտական 7-րդ օլիմպիադան, որին մասնակցել են 83 դպրոցականներ: Հայաստանում անցկացվել է քիմիայի Մենդելեևյան 49-րդ միջազգային օլիմպիադան, որին մասնակցել է 95 դպրոցական և որում Հայաստանը շահել է 1 բրոնզե մեդալ: Հանրապետական փուլի հաղթող դպրոցականներից 48 լավագույնները մասնակցել են նաև 8 միջազգային օլիմպիադաների՝ շահելով հետևյալ մեդալները. Ինֆորմատիկա՝ 1 արծաթե, 4 բրոնզե, ֆիզիկա՝ 2 ոսկե, 4 արծաթե, 5 բրոնզե, կենսաբանություն՝ 2 արծաթե, 1 բրոնզե, մաթեմատիկա՝ 1 ոսկե, 4 արծաթե, 9 բրոնզե, աստղագիտություն 5 բրոնզե. ընդհանուր առմամբ շահել են 3 ոսկե, 11 արծաթե, 24 բրոնզե մեդալներ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 59688.0 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Անց է կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից, որին մասնակցել է 1461 դպրոցական, համահայկական բնագիտական 2-րդ օլիմպիադան, որին մասնակցել է 100 դպրոցական: Հանրապետական փուլի հաղթող դպրոցականներից 37 լավագույնները մասնակցել են

նաև 8 միջազգային օլիմպիադաների՝ շահելով հետևյալ մեդալները /Թայվան՝ ինֆորմատիկա՝ 3 արծաթե, 3 բրոնզե, Ղազախստան՝ ֆիզիկա՝ 5 արծաթե, 3 բրոնզե, Վիետնամ՝ քիմիա՝ 1 բրոնզե, Ինդոնեզիա՝ կենսաբանություն՝ 3 բրոնզե, ՀԱՀ՝ մաթեմատիկա՝ 6 արծաթե, 1 բրոնզե, Ղազախստան՝ աստղագիտություն՝ 2 ոսկե, 2 արծաթե, 2 բրոնզե. ընդհանուր առմամբ շահել են 2 ոսկե, 16 արծաթե, 13 բրոնզե մեդալներ:

**38. 09.06.01. «15 Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ»**

Ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 861403.1 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Դրամարկղային ծախսի նվազումը 2014 թվականի նկատմամբ կազմել է 299.4 հազար դրամ կամ 0.03%: Իրականացվել են թվով 1420 կրթական ուսումնական հաստատություններում ընդգրկող Հայաստանի կրթական ցանցի /ՀԿՑ/ սպասարկման, կառավարման և ցանցային սարքավորումների պահպանման աշխատանքները: Ուսումնական հաստատություններին տրամադրվել են պահուստային կապի միջոցներ և անվճար բջջային կապի հեռախոսահամարներ: Շահագործվել է ինտերնետային-համակարգչային կայանը, ՀՀ 5 և ԼՂՀ 16 համայնքներում կազմակերպվել են դասընթացներ 447 աշակերտի և 338 ուսուցիչների համար: Կրթական հաստատություններում «Մայքրոսոֆթ» ընկերության արտոնագրված ծրագրային համակարգեր օգտագործելու նպատակով ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված պայմանագրի շրջանակում ձեռք են բերվել Windows և Office ծրագրային համակարգերի 18000 արտոնագրեր, որոնք տրամադրվել են ՀՀ կրթական ուսումնական հաստատություններին: Շահագործվել են մի շարք կրթական պորտալներ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 861702.5 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Դրամարկղային ծախսի աճը 2013 թվականի նկատմամբ կազմել է 266.7 հազար դրամ կամ 0.03% /գազի և էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ պայմանավորված/: Ծրագիրը իրականացվել է թվով 1420 կրթական ուսումնական հաստատություններում: Ուսումնական հաստատություններին տրամադրվել են պահուստային կապի միջոցներ և անվճար բջջային կապի հեռախոսահամարներ: Շահագործվել է ինտերնետային-համակարգչային



կայանը, ՀՀ 4 և ԼՂՀ 22 համայնքներում կազմակերպվել են դասընթացներ 235 աշակերտի և 389 ուսուցիչների համար:

**39. 09.06.01. «17. Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 125182.7 հազար դրամ, աճը 2014թ. նկատմամբ կազմել է 13476.4 հազար դրամ կամ 12.06%, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ընթացել են աշխատանքներ հինգ հիմնական բովանդակություններով՝

☐ Հեղինակային կրթական ծրագրերի լրամշակման, իրականացման և տարածման բաց համակարգ / մշակվել և վերամշակվել են ավելի քան 30 ծրագրեր, ուսուցման կազմակերպման 30-ից ավելի կարգեր, իրականացվել է 10-12 դասարաններում «Արվեստ» առարկայի նոր դասընթացների փորձարկում, մեդիագրադարանում պատրաստվել են 14 նոր ուսումնական փաթեթ, էլեկտրոնային նյութեր, մանկավարժական աշխատողների վերապատրաստման մոդուլներ 6 հատ/

☐ Մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացում որպես ուսումնական նախագծերի կազմակերպիչներ, սովորողների ինքնավարության և ինքնաուսուցման խորհրդատուներ /կազմակերպվել են մանկավարժական աշխատողների դպրոցների գործունեություն, սեմինարներ, դասվարների ամառային ճամբար, ուսումնական կենտրոնների բլոգներ 11 հատ, դասավանդողների ուսումնական բլոգներ 124 հատ, այլ գործունեություն

☐ Անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ, լրացուցիչ կրթություն /ստուգատեսային ճամբարներ, 7-րդ հանրակրթական Դիջիթեք 2015, 2-րդ հանրապետական բնագիտական-տեխնիկական ստեղծագործության ստուգատես 8 անվանակազով, 226 հայտով, 30-ից ավելի այլ ստուգատեսներ, փառատոներ, ակումբներ, այլ միջազգայնություն

☐ Աջակցություն կրթահամալիրի կրտսեր դպրոցների, քոլեջի կազմում գործող նախակրթարաններին /այդ թվում ընթերարանների կազմակերպում, մուլտադարան, ձայնադարան, այլ նախագծեր/

☐ Աջակցություն հեղինակային, կրթական ծրագրերի մշակող, իրականացնող և տարածող կրթահամալիրին /նյութերի պատրաստում հրապարակում, հաղորդումներ,

թարգմանություններ, պարբերականներ, մեթոդական մշակումներ, ցուցահանդեսներ, հավաքներ, գիտաժողովներ և այլն:

Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը կազմել է 6000-ից ավելի:

2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 111706.3 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը կազմել է 10000-ից ավելի, հեղինակային կրթական ծրագրով մշակվել և վերամշակվել են ավելի քան 60 ծրագիր և դրանց իրականացման համար 200-ից ավելի ուսումնական նախագծեր, ուսուցման կազմակերպման 30-ից ավելի կարգեր, հրապարակվել են մոտ 100 մեթոդական մշակումներ և ուսումնական նյութեր, իրականացվել են մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացման սեմինարներ, վերապատրաստումներ և այլն, պատրաստվել են մեդիանյութեր, մեդիաբլոգեր և այլն:

**40. 09.06.01. «19. Հայրուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում և հրատարակում»** ծրագրով նախատեսված էր 16000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարված գնումների արդյունքում կազմել է 12258.4 հազար դրամ կամ 76.62%: Նշված ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել թվով 1000 ֆիլմ-ձեռնարկ-տեսասկավառակ, տպագրվել են 4 անուն ուսումնական այլ նյութեր թվով 2000 օրինակ, ուսումնական ձեռնարկներ թվով 3000 հատ, ձեռք են բերվել 1700 օրինակ բրայլյան տետրեր: Տնտեսումն առաջացել է գնումների մասին օրենսդրության փոփոխության արդյունքում գնումն իրականացնելու անհնարինության հետևանքով: Դրամարկղային ծախսը 2014 թվականի նկատմամբ նվազել է 12.36%-ով կամ 1728.38 հազար դրամով:

2014 թվականին հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում և հրատարակում» ծրագրով նախատեսված էր 16000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարված գնումների արդյունքում կազմել է 13986.78 հազար դրամ կամ 87.42%: Նշված ծրագրի շրջանակներում մշակվել են թվով 20 ուսումնական ծրագրի, և տպագրվել են 6 անուն ուսումնական այլ նյութեր թվով 4295 օրինակ, ձեռք են բերվել 2000 օրինակ բրայլյան տետրեր:

41. 09.06.01. «20. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ»

ծրագրով 2015 թվականին նախատեսված էր 42223.7 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Դրամարկղային ծախսի աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 146.8 հազար դրամ կամ 0.35%, ինչը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1095, տրամադրվել է 144 խորհրդատվական տեղեկանք: Ճանաչման վերաբերյալ որոշում է կայացվել 9 օտարերկրյա որակավորումների մասին: Վերջին ցուցանիշի անկումը մեծապես կախված է Իրանի Իսլամական Հանրապետությունից եկող ուսանողների թվի կրճատմամբ՝ ելնելով Իրանի ներքաղաքական վիճակից և այնտեղ, մասնավորապես իրավագիտական և բժշկական մասնագիտությունների որակավորումների ճանաչման հետ կապած խնդիրներից: Տրամադրվել է 942 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին, որի գերակշիռ մասը կազմում է Վրաստանին տրամադրված տեղեկատվությունը՝ կապված Վրաստանում օրենսդրական փոփոխությունների հետ:

Նույն ծրագրով 2014 թվականին նախատեսված էր 42076.9 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1498, տրամադրվել է 124 խորհրդատվական տեղեկանք: Ճանաչման վերաբերյալ որոշում է կայացվել 18 օտարերկրյա որակավորումների մասին: Տրամադրվել է 1356 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին:

42. 09.06.01. «21. Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ» ծրագրի իրականացման համար 2015 թվականին նախատեսված 140000.0 հազար դրամի դրամարկղային ծախսը կատարվել է 97.91%-ով կամ 137075.84 հազար դրամով: Նվազումը 2014 թվականի նկատմամբ կազմել է 2924.163 հազար դրամ կամ 2.09%, ինչը պայմանավորված է միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումով: 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գազաթափողովի ու Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումի աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծվել և շահագործվել է պաշտոնական կայքէջ: «Արմնյուզ» հեռուստաընկերության կողմից ՀՀ ԿԳ նախարարության աջակցությամբ թողարկվել է կրթության և գիտության ոլորտում տիրող իրավիճակի և ընթացող

բարեփոխումների թեմայով մասնագիտական հաղորդաշար՝ «Ալմա Մատեր»: Իրականացվել է «Բոլոնիայի գործընթացը ՀՀ բուհերում՝ վերջինիս վերաբերյալ փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ ուսանողների համալսարանական կյանքի և աշխարհայացքի պատկերի վերհանումը» և «ՀՀ ուսանողների կենսատճի, սոցիալ-տնտեսական կարիքների և Բոլոնիայի գործընթացի գնահատման հետազոտություն» թեմաներով ուսումնասիրություններ: Իրականացվել է անգլալեզու [studyinarmenia.org](http://studyinarmenia.org) և [amhe.am](http://amhe.am) բարձրագույն կրթության վերաբերյալ պորտալի շահագործման աշխատանքները: Ստեղծվել է աշխատանքային փորձագիտական խումբ, որը ներկայացրել է բարձրագույն կրթության Բոլոնիայի գործընթացին համահունչ օրենսդրական փոփոխությունների փաթեթ: Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ առկա ֆորումներին, սեմինարներին, կոնֆերանսներին մասնակցության նպատակով իրականացվել են գործուղումներ և այլն:

2015 թվականի մայիսի 14-15-ին Երևանում կայացավ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի /ԵԲԿՏ/ 9-րդ նախարարական գագաթաժողովը և 4-րդ Բոլոնիայի քաղաքականության ֆորումը: Հայաստան են ժամանել 47 երկրների և 28 միջազգային կազմակերպությունների պատվիրակություններ, ընդհանուր մասնակիցների թիվը կազմել է 498:

Նույն ծրագրի իրականացման համար 2014 թվականին նախատեսված 140000.0 հազար դրամի դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Անցկացվել է Եվրոպական ուսումնական հաստատությունների ասոցիացիայի 24-րդ տարեկան համաժողովը, կազմակերպվել է «Կրթություն առանց խտրականության» միջազգային ժողովը, կատարվել է բարձրագույն կրթության բարեփոխումների մասին հանրային իրազեկում, թարգմանվել են անհրաժեշտ գրականություն և իրավական ակտեր, հրատարակվել են գրականություն և ուղեցույցեր, սպասարկվել է անգլալեզու կայքը, Իրականացվել են գործուղումներ, կազմակերպվել են Բոլոնիայի քարտուղարության աշխատանքները և այլն:

**43. 09.06.01. «23. Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապեպության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում»** ծրագրով 2015 թվականին նախատեսված է 505826.8 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած

ունկնդիրների թիվը կազմել է 8077 մարդ, կազմակերպվել են 19 հանրակրթական առարկաների գծով և դասվարների գծով սեմինարներ, որոնց մասնակցել է 4026 մարդ, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 71032, մշակվել են հանրակրթական ուսումնական տարբեր չափորոշիչներ, մոդուլներ, հրատարակվել են հոդվածներ, ուղեցույցեր, ընդհանուր առմամբ 159 հատ: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 3445.2 հազար դրամ կամ 0.69%, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Նույն ծրագրով 2014 թվականին նախատեսված է 502381.6 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 9099 մարդ, կազմակերպվել են 19 հանրակրթական առարկաների գծով սեմինարներ, որոնց մասնակցել է 6014 մարդ, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 44403, մշակվել են հանրակրթական ուսումնական տարբեր չափորոշիչներ, մոդուլներ, հրատարակվել են հոդվածներ, ուղեցույցեր, ընդհանուր առմամբ 141 հատ:

**44. 09.06.01. «24. Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում»** ծրագրի իրականացման համար նախատեսված էր 172049.7 հազար դրամ, որը 2014 թվականի նկատմամբ նվազել է 20460.1 հազար դրամով կամ 10.63%, ինչը պայմանավորված է գնահատված երեխաների միջին տարեկան թիվը 20-ով նվազմամբ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: 2015 թվականին կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կարիքների գնահատման մասով երեխաների ճշտված միջին տարեկան թիվը կազմել է 120:

Նույն ծրագրով 2014 թվականին նախատեսված էր 192509.8 հազար դրամ: ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1170-Ն որոշումով նվազեցվել է 10569.8 հազար դրամ՝ ճշտված նախահաշիվը կազմել է 181940.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: 2014 թվականին կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կարիքների գնահատման մասով երեխաների ճշտված միջին տարեկան թիվը կազմել է 140 (երեխաների միջին տարեկան նախատեսված թվաքանակի նկատմամբ նվազել է 10-ով):

45. 09.06.01. «25. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրով 2015 թվականին նախատեսված էր 166171.2 հազար դրամ: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 147.6 հազար դրամ կամ 0.09%, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Դրամարկղային ծախսը կազմել է 162963.6 հազար դրամ կամ 98.07%, որը 2014 թվականի նկատմամբ նվազել է 3060.0 հազար դրամով կամ 1.84%-ով, ինչը պայմանավորված է նրանով, որ 3 թեմատիկ հետազոտություններ իրականացնելու են 2016 թվականին: Ծրագրի շրջանակներում փորձաքննության են ենթարկվել մշակված 10 մասնագիտությունների և որակավորումների չափորոշիչների նախագծերը, փորձաքննության է ենթարկվել նաև նախորդ տարիներին մշակված, որոշակի ժամանակով կիրառված հետևյալ 10 մասնագիտությունների ու որակավորումների վերանայված պետական կրթական չափորոշիչները. մշակվել են ՄԿՈՒ մասնագիտությունների ու որակավորումների համար ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների տեխնիկական առաջադրանքներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, դասախոսներ, փորձագետներ, կատարվել են հետազոտական, բարեփոխումների արդյունքների գնահատման աշխատանքներ և այլն, ինչպես նախորդ տարվա ընթացքում: Հաշվետվությունը կցվում է:

Նույն ծրագրով 2014 թվականին նախատեսված էր 166023.6 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 166023.6 կամ 100%: Ծրագրի շրջանակներում մշակվել են 16 մասնագիտությունների որակավորման չափորոշիչների նախագծեր և մասնագետի գնահատման չափորոշիչ, կազմվել են 16 մասնագիտությունների ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր, վերանայվել է ՄԿՈՒ 10 մասնագիտությունների չափորոշիչներ, ուսումնական պլանները և մոդուլային ծրագրերը, ուսումնական ձեռնարկներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, դասախոսներ, փորձագետներ, կատարվել են հետազոտական, բարեփոխումների արդյունքների գնահատման աշխատանքներ և այլն:

46. 09.06.01. «27. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրով նախատեսված էր 20919.1 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ծրագրի նվազումը 2014

թվականի նկատմամբ կազմել է 4794.3 հազար դրամ կամ 18.65%, ինչը պայմանավորված է երեխաների թվի նվազմամբ: ՀՀ ԿԳՆ ենթակայության թվով 120 դպրոցներին հատկացվել են միջոցներ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման նպատակով:

Նույն ծրագրով 2014 թվականին նախատեսված էր 25713.4 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում հանրապետության թվով 120 դպրոցներին հատկացվել են միջոցներ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման նպատակով:

**47. ՀՀ ԿԳՆ միջոցով 09.06.01. «28. Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 1393554.5 հազար դրամ, որից համաֆինանսավորման համար 336287.3 հազար դրամ, իսկ վարկային ծրագրով՝ 1057267.2 հազար դրամ: ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի թիվ 920-Ն որոշմամբ ավելացվել է 210052.3 հազար դրամ համաֆինանսավորման մասով, միջծրագրային վերաբաշխմամբ ավելացվել է 2600.0 հազար դրամ համաֆինանսավորման մասով, ճշտված նախահաշիվը կազմել է 1606206.8 հազար դրամ, որից վարկային մասով՝ 1057267.2 հազար դրամ, համաֆինանսավորման մասով՝ 548939.6 հազար դրամ: Դրամարկղային ծախսը համաֆինանսավորման մասով կազմել է 548599.54 հազար դրամ կամ 99.94%, իսկ վարկային մասով կազմել է 2194398.15 հազար դրամ կամ 207.55%, ինչը պայմանավորված է նրանով, որ 2014 թվականին կնքված դրամաշնորհային ծրագրերի վերջնաժամկետը երկարացվել էր և աշխատանքները շարունակվել են 2015 թվականին:

2015 թվականին իրականացվել են «Հանրակրթության որակի բարելավում» բաղադրիչի հետևյալ ենթաբաղադրիչները.

- Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում
- Ուսումնական գործընթացում SCS-ի ներդրում
- Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին

Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» բաղադրիչի հետևյալ ենթաբաղադրիչները.

- Աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը

- Աջակցություն բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման ծրագրին: Հաշվետվությունը կցվում է:

« 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 3479967.6 հազար դրամ, որից համաֆինանսավորման համար 695993.5 հազար դրամ, իսկ վարկային ծրագրով՝ 2783974.1 հազար դրամ: Դրամարկղային ծախսը վարկային մասով կազմել է 1945250.18 հազար դրամ կամ 69.87%, համաֆինանսավորման մասով կազմել է 695993.5 հազար դրամ կամ 69.87%: Տնտեսումը կապված է հիմնականում Աջակցություն նորարարությունների մրցակցային հիմնադրամի /ԼՄՀ/ -ի կողմից բուհերին դրամաշնորհների տրամադրման գործընթացի ժամկետի երկարացմամբ, քանի որ այդ գործընթացի շրջանակում բուհերի բուհերի համար սպեցիֆիկ/մեծ ծավալի սարքավորումների գնման ընթացակարգը, համաձայն ՀԲ-ի գնումների ուղեցույցերի, պահանջում է երկար ժամանակ: Կնքված դրամաշնորհային ծրագրերի վերջնաժամկետը երկարացվել է: Նաև մեկ անգամ չի կայացել ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող բուհերի համար լաբորատոր սարքավորումների գնման մրցույթը, որի պատճառով կատարվել է ցանկերի վերանայում: Գործընթացը շարունակվել է 2015 թվականին: 2014 թվականին իրականացվել են հետևյալ բաղադրիչները.

- Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով

- Ուսումնական գործընթացում SCS-ի ներդրում

- Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին

- «Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» ենթածրագրի շրջանակներում որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում

- Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական տեղեկատվական համակարգի մշակում և ներդրում

- Աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը

- Աջակցություն բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման ծրագրին:



**48. 09.06.01. «29. Ուսուցիչների ատեստավորման գծով ծախսեր»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 4304.5 հազար դրամ դրամարկղային ծախսը կազմել է 3678.485 հազար դրամ կամ 85.46%: Տնտեսումը պայմանավորված է ուսուցիչների ատեստավորման գործընթացների քանակով: 2014 թվականի նկատմամբ դրամարկղային ծախսը աճել է 1760.295 հազար դրամով կամ 91.76%-ով: Աճը պայմանավորված է տարակարգ ստացած ուսուցիչների թվաքանակի ավելացմամբ:

Նույն ծրագրով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 4304.5 հազար դրամ դրամարկղային ծախսը կազմել է 1918.39 հազար դրամ կամ 44.57%:

**49. 09.06.01. «30. «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացում»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 69141.1 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով, ինչպես 2014 թվականին: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 1624.9 հազար դրամ կամ 2.41%, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող «Հայ ասպետ» հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 96 դպրոցների թվով 1056 աշակերտներ, որոնք նախօրոք հանձնարարված թեմաներով զարգացրել են իրենց գիտելիքները, սովորել ազգային պարեր ու երգեր: Հաղթող թիմերը վաստակել են մրցանակներ, մասնակցել են արշավների:

Նույն ծրագրով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 67516.2 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100 %-ով: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող «Հայ ասպետ» հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 96 դպրոցների թվով 1056 աշակերտներ, որոնք նախօրոք հանձնարարված թեմաներով զարգացրել են իրենց գիտելիքները, սովորել ազգային պարեր ու երգեր: Հաղթող թիմերը վաստակել են մրցանակներ, մասնակցել են արշավների:

**50. 09.06.01. «32. Արեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 52024.0 հազար դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջոցառման վերաբաշխման միջոցով ավելացվել է 24000,0 հազար դրամ՝ տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճարները վճարելու

նպատակով, ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1570-Ն որոշմամբ նվազեցվել է 8100.0 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 67924.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել 67851.98 հազար դրամ կամ 99.89%: Տնտեսումը առաջացել է տարակարգերի շնորհման համար իրականացված ատեստավորման արդյունքում՝ հավելավճար է տրվել ընդամենը 572 ուսուցչի, որոնք կախված տարակարգի շնորհման ամսից, տարվա կտրվածքով տարբեր կերպ են ֆինանսավորվել: 2014 թվականի նկատմամբ դրամարկղային ծախսի աճը կազմել է 34115.96 հազար դրամ կամ 101.13%:

Նույն ծրագրով 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 50000.0 հազար դրամ (տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրման համար), դրամարկղային ծախսը կազմել է 33736.02 հազար դրամ կամ 67.47%: Տնտեսումը առաջացել է տարակարգերի շնորհման համար իրականացված ատեստավորման արդյունքում՝ տարակարգ է շնորհվել ընդամենը 303 ուսուցչի, որոնք կախված տարակարգի շնորհման ամսից, տարվա կտրվածքով տարբեր կերպ են ֆինանսավորվել:

**51. 09.06.01. «33. Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 49102.0 հազար դրամ: ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1362-Ն որոշմամբ ավելացվել է /միջին տարեկան երեխաների թվի ավելացման արդյունքում/ 4193,3 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 53295.3 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ապահովվել է հանրապետությունում «Դպրոցական սնունդ» ծրագրի՝ դպրոցականներին սննդով ապահովելու համար նախատեսված մթերքների տեղափոխման տրանսպորտային փոխադրումների կազմակերպումը, ինչպես նաև սննդով ապահովվել են ՀՀ ԿԳՆ ենթակայության՝ Սյունիքի և Վայոց Ձորի մարզում գտնվող դպրոցների տարրական դասարանների 384 երեխաները:

Նույն ծրագրով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 126440.2 հազար դրամ: ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 692-Ն որոշմամբ ՀՀ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և նախակրթարանների թվով 384 աշակերտների համար սննդի կազմակերպման ու ապահովման նպատակով նվազեցվել է 98029.8 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 28410.4 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով:

52. 09.06.01. «34. Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացում» ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 10000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Պատրաստվել են մաթեմատիկա, հանրահաշիվ առարկաների վերաբերյալ երեք ձեռնարկներ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 10000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 9200.0 հազար դրամ կամ 92.00%-ով: Ծրագիրը նպատակաուղղված է մշակելու տարատարիք ուսումնական խմբերում մաթեմատիկա առարկայի դասավանդման հայեցակարգային դրույթները, մշակելու և փորձարկելու ուսուցման կազմակերպման համար նախատեսված ուսումնադիդակտիկ նյութերը:

53. 09.06.01. «35. Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում» ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 3600.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով՝ ինչպես 2014 թվականին: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի դասավանդում Բուխարեստի համալսարանում:

ՀՀ 2014 թվականին պետական բյուջեով նախատեսված էր 3600.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով:

54. 09.06.01. «36.Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում (Զայցբուրգ)՝ ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 3600.0 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Մեկ դասախոս իրականացրել է դասախոսություն սփյուռքագիտության ոլորտում Զայցբուրգի համալսարանում:

2014 թվականին նախատեսված է 3600.0 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով:

55. 09.06.01.37. «Հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորում» ծրագրով նախատեսվել է 60000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Բուհ-երի և հանրակրթական ուսումնական հաստատությունների 2015թ. տարվա վարկանիշավորման իրականացման համար.

◆ իրականացվել են վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակման, նոր՝ միասնական ցանկով փորձնական վարկանիշավորման մեթոդաբանության մշակման աշխատանքներ, ինչպես նաև վերոնշյալ լրամշակման հիման վրա իրականացվել են ծրագրային փոփոխություններ էլեկտրոնային համակարգերում,

◆ հրապարակվել է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» հարցաթերթիկների լրացման ուղեցույց-ձեռնարկը, իրականացվել է ընտրանքային հետազոտություն բուհ-երի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանակներում,

◆ կատարվել են տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման աշխատանքներ,

◆ իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն ՀՀ բուհ-երի ազգային վարկանիշավորման համակարգի շրջանակներում:

Հրապարակվել է թվով 16 բուհ-երի, ինչպես նաև 8 խմբի բաժանված հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման արդյունքները Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայքում:

Նույն ծրագրով 2014 թվականին նախատեսվել է 60000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Բուհերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա վարկանիշավորման իրականացման համար.

☞ կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ,

☞ իրականացվել են վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակման աշխատանքներ և վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակման հիման վրա իրականացվել են ծրագրային փոփոխություններ էլեկտրոնային համակարգերում,

☞ հրապարակվել է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգ» հարցաթերթիկների լրացման ուղեցույցը, իրականացվել է ընտրանքային հետազոտություն բուհերի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանակներում,

☞ կատարվել են տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման աշխատանքներ:

Կազմակերպվել են բուհերի 6 ցուցանիշներով 49 վարկանիշավորում: Կատարվել է 1389 դպրոցների 5 ցուցանիշներով վարկանիշավորում, որոնցից 1357-ը պետական և 32-ը՝ ոչ պետական: Արդյունքները հրապարակվել են «Հայկական կրթական միջավայր» պորտալի համապատասխան ենթակայքում:

56. 09.06.01. «38. Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովում» ծրագրով 2015 թվականին նախատեսվել է 81183.4 հազար դրամ, աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 15807.2 հազար դրամ կամ 24.18%, ինչը պայմանավորված է երեխաների թվի ավելացմամբ, նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: դրամարկղային ծախսը կազմել է 81183.4 հազար դրամ կամ 100%: Ծրագրով մատուցվել է թվով 65 երեխայի կրթաբուժական ծառայություններ:

2014 թվականին նախատեսվել է 65376.2 հազար դրամ, ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1170-Ն որոշումով ավելացվել է 2227.1 հազար դրամ՝ երեխաների թվի փոփոխությամբ պայմանավորված, ճշտված նախահաշիվը կազմել է 67603.3 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100 %-ով: Ծրագրով նախատեսված էր մատուցելու թվով 55 երեխայի կրթաբուժական ծառայություններ, ճշտված թիվը կազմել է 58:

57. 09.06.01. «41. Համաշխարհային բանկի աջակցությամբ հրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» դրամաշնորհային ծրագիր, որով նախատեսված է 578025.9 հազար դրամ, որից 462420.7 հազար դրամը դրամաշնորհային միջոցներից է, իսկ 115605.2 հազար դրամը՝ համաֆինանսավորմամբ, ՀՀ պետական բյուջեի միջոցներից, միջծրագրային վերաբաշխմամբ նվազեցվել է 2600.0 հազար դրամ համաֆինանսավորման մասով, ճշտված բյուջեն կազմել է 575425.9 հազար դրամ, որից 462420.7 հազար դրամը դրամաշնորհային միջոցներից է, իսկ 113005.2 հազար դրամը՝ համաֆինանսավորմամբ: Դրամարկղային ծախսը կազմել է 573117.35 հազար դրամ, որից վարկային մասով՝ 460573.9 հազար դրամ կամ 99.60%, իսկ ՀՀ պետական բյուջեի մասով՝ 112543.45 հազար դրամ կամ 99.59%, Աճը 2014 նկատմամբ ՀՀ պետական բյուջեի մասով կազմել է 101187.02 հազար դրամ կամ 891.01%, քանի որ 2014 թվականին տեղի է ունեցել ծրագրի բովանդակության փոփոխություն:

Ստեղծվել են 33 նախակրթարաններ Կոտայքի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում, որոնցում ընդգրկվել է մոտ 1170 երեխա: Վերապատրաստվել են թվով 79 դաստիարակ: Պատրաստվում են մի շարք ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթեր: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել հանրակրթական պետական չափորոշի, առարկայական

չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման նպատակով խորհրդատվական կազմակերպության ուղղությամբ: Նորարարությունների մրցակացային հիմնադրամի միջոցով 6 բուհի տրամադրվել է դրամաշնորհ /Հաշվետվությունը կցվում է/:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 19-ի թիվ 283-Ն որոշմամբ ՀԲ աջակցությամբ իրականացվող «Հանրակրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային ծրագրով նախատեսված էր 131223.2 հազար դրամ, որից 106368.6 հազար դրամը դրամաշնորհային միջոցներից է, իսկ 24854.6 հազար դրամը՝ համաֆինանսավորմամբ, ՀՀ պետական բյուջեի միջոցներից: ՀՀ պետական բյուջեի մասով դրամարկղային ծախսը կազմել է 11356.43 հազար դրամ կամ 45.69%: Տնտեսումը պայմանավորված է նրանով, որ ծրագիրն ընդգրկվել է հիմնական վարկային ծրագրի մեջ և կշարունակվի այլ ծրագրային փաթեթի ներքո:

Երևան քաղաքի 14 հաստատություններում ստեղծվել են նախակրթարաններ, իրականացվել են համապատասխան տարածքների բարեկարգման, գույքով համալրման աշխատանքները, ձեռք են բերվել անհրաժեշտ ուսումնամեթոդական համալիր, խաղալիքներ, պիտույքներ և այլն: Նոր նախակրթարաններում ընդգրկված են մոտ 400 երեխա: Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկան և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրման նպատակով հետազոտություն է իրականացվել Կոտայքի մարզում և Երևանում՝ հետազոտության առաջին փուլը:

**58. 09.06.01. «42. Աջակցություն «Դպրոց կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության գործունեությանը»** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 20000.0 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: «Դպրոց-կենտրոնների միություն» ԻԱՄ-ը 2015թ. փետրվարից հոկտեմբեր ամիսներին կազմակերպել է տարբեր մասնագիտական հավաքներ, հանդիպումներ, սեմինարներ, քննարկումներ՝ ուղղված մանկավարժների մասնագիտական կարիքների վերհանմանը և դասակարգմանը, ուսուցման խնդիրներին, դպրոցների ազգային վարկանիշավորման համակարգին, դասավանդման ծրագրերին և մեթոդներին, մշակված նյութերի ներկայացմանը և լուսաբանմանը, գնահատման գործիքներին և դպրոցին հուզող այլ հարցերի:

2015թ. ընթացքում միության կողմից կազմակերպված մասնագիտական հավաքների մասնակցել են «Դպրոց-կենտրոնների միություն» ԻԱՄ-ի անդամ 110 դպրոց-կենտրոնների տնօրեններ: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին:

**59. 09.06.01. «43.Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում»** ծրագրի շրջանակներում գույքի և սարքավորումների ձեռքբերում՝ ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 119804.0 հազար դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջծրագրային վերաբաշխման միջոցով նվազեցվել է ծրագրով նախատեսված ամբողջ գումարը՝ 119804,0 հազար դրամ՝ Կրթության գերազանցության ազգային ծրագրի ամբողջական իրականացման նպատակով: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին:

**60. 09.06.01. «44.«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում՝** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 7830.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակում վերապատրաստվել են Երևան քաղաքի 25 և մարզերի 50 ուսուցիչ: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին:

**61. 09.06.01. «45. Դպրոցներում ոռբոտատեխնիկայի զարգացման իրականացում՝** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 23398.4 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: 2015 թվականի ավարտին դպրոցներում ոռբոտաշինության խմբակների թիվը եղել է 67, որոնցում ընդգրկված են եղել շուրջ 1000 աշակերտներ: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին: 2014 թվականին այն ֆինանսավորվել է ՀՀ պահուստային ֆոնդից 14400.0 հազար դրամի չափով 2014 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար:

**62. 09.06.01. «46.Պրահայի Կարլովի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում՝** ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով ֆինանսավորվել է 4935.1 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի և պատմության դասավանդում Պրահայի Կարլովի համալսարանում: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին: 2014 թվականին այն ֆինանսավորվել է ՀՀ պահուստային ֆոնդից:

**63. 09.06.01. «47. Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացում»**

ծրագրով ՀՀ 2015 պետական բյուջեով նախատեսվել է 450000.0 հազար դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջծրագրային վերաբաշխման միջոցով ավելացվել է 137777,0 հազար դրամ՝ Կրթության գերազանցության ազգային ծրագրի ամբողջական իրականացման նպատակով, ճշտված նախահաշիվը կազմել է 587777.0 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին: 2014 թվականի այն ֆինանսավորվել է ՀՀ պահուստային ֆոնդից 256605.6 հազար դրամի չափով: Կրթության գերազանցության ազգային ծրագիրը /ԿԳԱԾ/ Հայաստանի հանրակրթության որակի բարձրացման և համակարգային բարեփոխումների իրականացման նախաձեռնություն է: 2015թ. ընթացքում ԿԳԱԾ-ի շրջանակում Իրականացվեցին ուսուցիչների վերապատրաստման ծրագրի լրամշակված տարբերակի լիակատար փորձարկում և լրամշակման ամփոփում, վերապատրաստող միջուկ խմբի 20 ավագ և 20 վերապատրաստող-մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև՝ ծրագրի թեկնածուների հավաքագրում և ընտրություն: «Արարատյան բակալավրիատը» /ԱԲ/, որպես հայկական կրթական լավագույն ավանդների և ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա սովորելու միջազգայնորեն ճանաչելի և մրցունակ համակարգ, լրամշակվեց և ներդրվեց «Այբ» ավագ դպրոցում: Մշակվեց ԱԲ դպրոցների արդյունավետ տեղակայման խորհրդատվական ձեռնարկը, կատարվեց դպրոցների ֆիզիկական միջավայրի տեղական և միջազգային չափանիշների ուսումնասիրություն, կազմակերպվեց Ստեփանակերտում ԱԲ համակարգի դպրոցի ներդրման նպատակով ճանաչողական այց:

2014թ. Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի մասնագետների կողմից մշակվել է ուսուցիչների, իսկ 2015թ.՝ նաև ԿԳԱԾ-ի ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման բաժնի մասնագետների վերապատրաստման ծրագիրը: Վերապատրաստումը տևել է 20 շաբաթ, որից 3 շաբաթը դեմ առ դեմ հանդիպումներն էին: Վերապատրաստման ծրագիրը բաղկացած էր 6 բաղադրիչից, որոնք ուղղված են դասավանդման արդյունավետության բարձրացմանը խոչընդոտող հիմնական խնդիրների լուծմանը: 2015թ., մինչ բուն վերապատրաստման ծրագրի մեկնարկը, մասնակիցներն իրականացրել են հատուկ առանձնացված 12



մասնագիտական հոդվածների ընթերցումներ, խմբային քննարկումներ, վերլուծություններ: ՀՀ ԿԳՆ-ում տեղի ունեցած մի շարք հանդիպում-քննարկումների արդյունքում Արարատյան բակալավրիատի ծրագիրը լրամշակվեց, ինչի հիմքով էլ 2015թ. դեկտեմբերի 29-ին, ՀՀ ԿԳ նախարարի թիվ 1073 Ա/Ք հրամանով, «Այբ» կրթական հիմնադրամի ներկայացրած «Արարատյան բակալավրիատ» ծրագիրը հաստատվեց որպես այլընտրանքային:

**64. 09.06.01. «48. Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում»** ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների համար գույքի և սարքավորումների ձեռքբերում՝ ծրագրով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 200000.0 հազար դրամ, որի դրամարկղային ծախսը կազմել է 102461.946 հազար դրամ կամ 51.23%: Տնտեսումը պայմանավորված է եղել 17 չափաբաժիններից 7-ի գնման գործընթացի չկայացման, իսկ 2-չափաբաժնի մասով պայմանագիրը լուծվել է մատակարարումը չիրականացնելու հետևանքով: Թվով 4 արհեստագործական ուսումնարանների համար ձեռք են բերվել ուսումնական արհեստանոցներ , թվով երեք արհեստանոցի համար՝ ուսումնական կաբինետներ և մեկ համակարգչային լսարան: Գործընթացն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կնքված N°ENPI/2009/021-066 ֆինանսավորման համաձայնագրի «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» ծրագրի շրջանակում և սկսվել է 2015 թվականին:

**65. 09.08.01. «02. Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարության աշխատակազմի մասով)»** ծրագրով 2015 թվականին նախատեսված էր 832209.5 հազար դրամ դրամ, ծրագրի աճը 2014 թվականի նկատմամբ հիմնականում պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից բազային աշխատավարձի բարձրացմամբ, /2015 թվականին այն բարձրացումը հաշվարկվել է 12 ամսվա՝ 2014 թվականի 6 ամսվա փոխարեն/, աշխատավարձի բնականոն աճով: դրամարկղային

ծախսը կազմել է 825261.7289 հազար դրամ կամ 99.17%, (տնտեսումը հիմնականում առաջացել է էներգետիկ, կապի, տեղեկատվական, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների, գրասենյակային նյութերի ձեռքբերման մասով): 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ աճը կազմել է 32.35% կամ 201712.5389 հազար դրամ:

Նույն ծրագրով 2014 թվականին նախատեսված էր 628457.6 հազար դրամ դրամ, 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների միջծրագրային վերաբաշխման միջոցով ավելացվել է 5000,0 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 633457.6 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 623549.19 հազար դրամ կամ 98.44% (տնտեսումը հիմնականում առաջացել է էներգետիկ, կապի, տեղեկատվական, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների, գրասենյակային նյութերի ձեռքբերման մասով):

**66. 01.01.01. «04. Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարի աշխատակազմի մասով)»** ծրագրով 2015 թվականին նախատեսված էր 78391.1 հազար դրամ, ծրագրի աճը << 2014 թվականի նկատմամբ հիմնականում պայմանավորված է բազային աշխատավարձի՝ 2014 թվականի հուլիսի 1-ից բարձրացմամբ /2015 թվականին այն բարձրացումը հաշվարկվել է 12 ամսվա՝ 2014 թվականի 6 ամսվա փոխարեն/: Դրամարկղային ծախսը կազմել է 75861.421 հազար դրամ կամ 96.77% (տնտեսումը հիմնականում առաջացել է կապի, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման, գրասենյակային նյութերի ձեռքբերման ծախսերի մասով): Դրամարկղային ծախսի աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 19651.012 հազար դրամ կամ 34.96%:

Նույն ծրագրով 2014 թվականին նախատեսված էր 59319.9 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 56210.409 հազար դրամ կամ 94.76% (տնտեսումը հիմնականում առաջացել է կապի, տրանսպորտային նյութերի, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում ծախսերի մասով):

**67. 01.04.01. «03. «Գիտական և գիտափորձիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում»** ծրագրի իրականացման համար <<

2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 56240.7 հազար դրամ: Աճը 2014 թվականի նկատմամբ կազմել է 2163.1 հազար դրամ կամ 4.00%, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Դրամարկղային ծախսը կազմել է 51599.837 հազար դրամ կամ 91.75%: 2014 թվականի դրամարկղային ծախսի նկատմամբ նվազումը կազմել է 2477.633 հազար դրամ կամ 4.58%, որը պայմանավորված է պաշտպանությունների քանակի նվազմամբ: 2015 թվականին գիտական աստիճանաշնորհման համակարգում ատենախոսությունների պաշտպանությունների թիվը կազմել է 511 պաշտպանություն, որից դոկտորական՝ 34 և թեկնածուական՝ 477: Գիտական աստիճանի վկայագիր ստացել են 593 գիտնական, որից գիտությունների դոկտորի՝ 38, գիտությունների թեկնածուի՝ 555: Գիտամանկավարժական կոչումների շնորհման գործընթացում տրվել է 287 կոչում, որից պրոֆեսորի՝ 62 և դոցենտի՝ 225:

Նույն ծրագրի իրականացման համար ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 54077.6 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 54077.47 հազար դրամ կամ 100%: 2014 թվականին գիտական աստիճանաշնորհման համակարգում ատենախոսությունների պաշտպանությունների թիվը կազմել է 650, որից դոկտորական՝ 42 և թեկնածուական՝ 608, գիտամանկավարժական կոչումների շնորհման գործընթացում տրվել է 202 գիտական կոչում, որից պրոֆեսորի՝ 52, դոցենտի՝ 150, գիտական աստիճանի վկայագիր ստացել են 563 գիտնական, որից գիտությունների դոկտորի՝ 38, գիտությունների թեկնածուի՝ 525:

**68. 08.01.01. «05. Ուսանողական մարզական միջոցառումներ»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 38000.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 37630.0 հազար դրամ կամ 99.03%: 2014 թվականի նկատմամբ տարբերությունը պայմանավորված է նրանով, որ 2015 թվականին Հայաստանը մասնակցել է երկու տարին մեկ անցկացվող համաշխարհային ունիվերսիադային, որն անցկացվել է Կորեայի Գվանգջու քաղաքում: Հայաստանը մասնակցել է 6 մարզաձևում 12 մարզիկով և նվաճել մեկ ոսկե մեդալ սպորտային մարմնամարզությունից: Հայաստանի պատվիրակությունը 138 երկրների շարքում գրավել է 41-րդ տեղը: Անցկացվել է ՀՀ 16-րդ ուսանողական մարզական խաղերը՝ 10 մարզաձևերից, որոնց մասնակցել են 16 բուհերի 1198 մարզիկներ: Ընդհանուր առմամբ խաղարկվել է հաղթողի 14 գավաթ և 378 մեդալ: 2015 թվականի

Երևանում կայացել է շախմատի Եվրոպական համալսարանական առաջնությունը, որին մասնակցել են 9 Եվրոպական երկրների 25 համալսարանական թիմեր, շուրջ 82 ուսանող-շախմատիստներ, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի թիմը տղաների մրցապայքարում գրավել է 2-րդ տեղը:

Ուսանողական մարզական միջոցառումներ» ծրագրի իրականացման համար ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 4350.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 4350.0 հազար դրամ կամ 100%: Անցկացվել է ՀՀ 15-րդ ուսանողական մարզական խաղերը՝ 9 մարզաձևերից, որոնց մասնակցել են 19 բուհերի և Արցախի պետական համալսարանի 1176 մարզիկներ: Ընդհանուր առմամբ խաղարկվել է հաղթողի 14 գավաթ և 336 մեդալ:

**69. 08.01.01. «10. Նավամոդելային սպորտի զարգացում»** ծրագրի իրականացման համար ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով, ինչպես և 2014 թվականին նախատեսված էր 5500.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: 2015 թվականին Բուլղարիայում կայացած նավամոդելային սպորտի Աշխարհի առաջնությանը Հայաստանը շահել է միաժամանակ ոսկե և արծաթե մեդալներ: Հայաստանի ներկայացուցիչը 4-րդ անգամ նվաճել է Աշխարհի չեմպիոնի կոչումը՝ արժանանալով լավագույն արդյունք ցուցաբերած անվանական գավաթին: 2015թ. հետո աշխարհի, Եվրոպային, չեմպիոնների կոչումը և աշխարհի ռեկորդը ստացան Հայաստանյան գրանցում:

2014 թվականին Բուլղարիայում կայացած նավամոդելային սպորտի Եվրոպայի առաջնությանը մասնակցելու համար պատրաստվել են «Նավիգա» համաշխարհային կազմակերպության պահանջներին համապատասխան նոր դասերի մրցունակ մոդելներ, առաջնությանը շահել են ոսկե, արծաթե ու բրոնզե մեդալներ: Սահմանվել է աշխարհի 3 ռեկորդ, ոչ պաշտոնական թիմային հաշվարկով գրավել են 1-ին տեղը: Մասնակիցներն ապահովվել են անհրաժեշտ մարզական տեխնիկայով, նյութերով, գույքով:

**70. 08.02.02. «01. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ»** ծրագրով՝ «Խ. Աբովյանի տուն թանգարան» ՊՈԱԿ-ի թանգարանային ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 31636.8 հազար դրամ: Աճը 2014 թվականի նկատմամբ

պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 695-Ն որոշմամբ նվազեցվել է 18100,8 հազար դրամ՝ «Խ. Արովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ մշակույթի նախարարությունը: Ճշտված նախահաշիվը կազմել է 13536.0 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված էր 28254.9 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով:

*71. 08.03.02. «06. Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակում»* ծրագրով նախատեսված մանկական թերթերի և ամսագրերի («Աղբյուր», «Ծիծեռնակ», «Լուսապսակ», «Խատուտիկ», «Փերի», «Մանկանց երկիր» և «Կանչ») սուբսիդավորման համար հատկացված էր 45171.2 հազար դրամ, աճը 2014 թվականի նկատմամբ պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և կազմել է 2206.9 հազար դրամ կամ 5.14%: Դրամարկղային ծախսը կատարվել է 100 %-ով:

2014 թվականին Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակում» ծրագրով նախատեսված մանկական թերթերի և ամսագրերի («Աղբյուր», «Ծիծեռնակ», «Լուսապսակ», «Խատուտիկ», «Փերի», «Մանկանց երկիր» և «Կանչ») սուբսիդավորման համար հատկացված էր 42964.3 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100 %-ով:

*72. 08.04.01. «04. Աջակցություն Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը»* ծրագրով նախատեսված էր 12012.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակում անցկացվել են թվով 11 միջոցառումներ, շահառուների թիվը կազմել է շուրջ 700 մարդ: Կատարվել է Միջազգային փառատոն 'Դիլիջանյան խաղեր 2016'ի համար կանխավճար:

2014 թվականին նախատեսված էր 12012.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակում անցկացվել են թվով 6 միջոցառումներ, զուտ մասնակիցների թիվը կազմել է 205:

*73. 10.09.02.02. «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում»* ծրագրով նախատեսված է 730152.0 հազար դրամ,

ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1570-Ն որոշմամբ նվազեցվել է 188400.0 հազար դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 541752.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 541619.21 հազար դրամ կամ 99.98%, շահառուների թիվը կազմել է 8339 մարդ: Դրամարկղային ծախսը 20 4 թվականի նկատմամբ նվազել է 496652.78 հազար դրամով կամ 47.83%ով, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ, ինչպես նաև սոցիալական փաթեթի առողջապահական ծառայությունների բաղադրիչը ՀՀ առողջապահության նախարարությանը փոխանցելու հետ:

2014 թվականին պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով նախատեսված է 1392996.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1038271.99 հազար դրամ կամ 74.54%, շահառուների թիվը կազմել է 8659 մարդ:

2015 թվականին նախարարության համակարգում աշխատողների թիվը կազմել է 30006 մարդ, որից նախարարության կենտրոնական ապարատի թվաքանակը՝ 239:

**74. 11.01.01. «01.ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ»-ից** տրամադրվել է 259448.1 հազար դրամ տարբեր նպատակների համար, որի դրամարկղային ծախսը կազմել է 256496.01 հազար դրամ կամ 98.86%: Տնտեսումը պայմանավորված է կայացած մրցույթների արդյունքով:

1) ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 667-Ն որոշումով հատկացվել է 15590.0 հազ. դրամ՝ 2015 թվականի հոկտեմբերի 5-9-ը «Օլիմպիական սպորտ և սպորտ բոլորի համար» խորագրով 19-րդ միջազգային գիտական խորհրդաժողովի կազմակերպման և անցկացման նպատակով: Դրամարկղային ծախսը կազմել է 100%:

2) ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1127-Ն որոշմամբ հատկացվել է 8950,0 հազար դրամ «Ուսուցչի օր» տոնի կապակցությամբ ուսուցիչների մեծարման և արժևորման երեկո կազմակերպելու նպատակով: Դրամարկղային ծախսը կազմել է 100%:

3) ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1163-Ն որոշմամբ հատկացվել է 47977,0 հազար դրամ «Ապարանի ռազմամարզական վարժարան» ՊՈԱԿ-ի շենքի էլեկտրամոնտաժային, ջեռուցման, սանհանգույցների, տանիքի,

խաղահրապարակի վերանորոգման, արտաքին գազաֆիկացման աշխատանքների իրականացման և վարժարանի համար ննջասենյակային, խոհանոցային կահույքի, սարքերի ու սարքավորումների ձեռքբերման նպատակով: Դրամարկղային ծախսը կազմել է 96.60% կամ 46345.89 հազար դրամ:

4) ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1257-Ն որոշմամբ հատկացվել է 20000,0 հազար դրամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարավում, Արաքսի ցածրադիր գոտում ուսումնաարտադրական բազայի շինարարության նպատակով: Դրամարկղային ծախսը կազմել է 100%:

5) ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1263-Ն որոշմամբ հատկացվել է 29931,1 հազար դրամ՝ «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով: Դրամարկղային ծախսը կազմել է 95.59% կամ 28610.12 հազար դրամ:

6) ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1342-Ն որոշմամբ հատկացվել է 17000,0 հազար դրամ՝ հասարակության շրջանում գիտելիքների մակարդակի բարձրացմանը խթանող միջոցառումների իրականացման նպատակով: Դրամարկղային ծախսը կազմել է 100%:

7) ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1508-Ն որոշմամբ հատկացվել է 120000,0 հազար դրամ, որից՝ 90000.0 հազ. դրամը՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին կրթաթոշակներ հատկացնելու նպատակով և 30000.0 հազ. դրամը՝ երիտասարդ գիտաշխատողներին աջակցելու նպատակով: Դրամարկղային ծախսը կազմել է 100%:

**75. 01.01.03. «04. Արդասահմանյան պաշտոնական գործուղումներ»** ծրագրի իրականացման համար 2015 թվականին ՀՀ վարչապետի համապատասխան որոշումներով և ՀՀ նախագահի համապատասխան կարգադրություններով հատկացվել է 12705.341 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել 12631.724 հազար դրամ կամ 99.42%:

76. 04.09.01. «20. ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դադարան փակող հայցադիմումների, դիմումների և գանգալների, դադարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների, ինչպես նաև դադարանի կողմից փակող փաստաթղթերի պատճենների տրամադրման ծախսեր» ծրագրի շրջանակներում ներկայացված հայցադիմումների համար փոխանցված պետական տուրքի գումարը 2015 թվականին կազմել է 262.0 հազար դրամ 2014 թվականի 178.1 հազ. դրամի դիմաց:

2015 թվականին լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով պետական տուրքի փաստացի գանձված գումարը կազմել է 35786.23 հազար դրամ: Պլանավորված գումարը եղել է 50250.0 հազար դրամ, որը ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1570-Ն որոշմամբ նվազեցվել է 14550 հազար դրամով, ճշտված պլանը կազմել է 35700.0 հազար դրամ: (տրամադրվել է թվով 63 լիցենզիա): Նվազումը 2014 թվականի նկատմամբ կազմել է 14471.69 հազար դրամ կամ 28.79%, որը պայմանավորված է տրամադրված լիցենզիաների քիչ քանակով: Պատճառը մարզային ենթակայության մի շարք դպրոցների կողմից չներկայացնելն է անշարժ գույքի օգտագործման վկայականի բացակայության հիմքով:

Դասամատյանների և դասագրքերի իրացումից մուտքերը կազմել են 79175.1 հազար դրամ: 2015 թվականին նախատեսվել էր 124000.0 հազար դրամի մուտքեր, ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1570-Ն որոշմամբ նվազեցվել է 45000.0 հազար դրամ, ճշտված պլանը կազմել է 79000.0 հազար դրամ:

Դասամատյանների և դասագրքերի իրացումից մուտքերը 2014 թվականի նկատմամբ նվազել են, քանի որ նախորդ տարիներին առկա էր մուտքերի թերիրացում, որը շտկվել է հիմնականում 2013 և 2014 թվականներին:

2014 թվականին լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով նախատեսված 44380.0 հազար դրամ պետական տուրքի փաստացի գանձված գումարը կազմել է 50257.92 հազար դրամ (տրամադրվել է թվով 386 լիցենզիա): Դասամատյանների և դասագրքերի իրացումից մուտքերը կազմել են 115423.69 հազար դրամ՝ նախատեսված 115423.60 հազար դրամի դիմաց:



2015 թվականին նախարարության ենթակայության առևտրային կազմակերպությունների պետական մասնակցության դիմաց ՀՀ պետական բյուջե փոխանցված շահութաբաժինը կազմել է 36288.02 հազար դրամ: Նվազումը 2014 թվականի նկատմամբ կազմել է 34.93% կամ 19480.99 դրամ, որը պայմանավորված է նրանով, որ 2014 թվականին փոխանցված շահութաբաժիններն իրենց մեջ ներառում են նախորդ տարիների՝ ստուգումների արդյունքում արձանագրված գումարներ:

2014 թվականին նախարարության ենթակայության առևտրային կազմակերպությունների պետական մասնակցության դիմաց ՀՀ պետական բյուջե փոխանցված շահութաբաժինը կազմել է 55769.01 հազար դրամ: Նշված գումարից 30111.1 հազ, դրամը փոխանցվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում ստուգումների արդյունքում կազմված արձանագրությունների հիման վրա 2010-2012թթ. համար: